ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

« » ---------- 2010 ԹՎԱԿԱՆԻ N – Ա

ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Պետական կառավարչական հիմնարկների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայությանն անհատույց օգտագործման իրավունքով ամրացված՝ Երևան քաղաքի Արշակունյաց պողոտայի N 7 հասցեում գտնվող ավտոպարկի՝ 172.5 քառ. մետր ընդհանուր մակերեսով և 520682 դրամ հաշվեկշռային արժեքով ավտոտնակներից՝ 78.5 քառ. մետր ընդհանուր մակերեսով 236948 դրամ հաշվեկշռային արժեքով 4 ավտոտնակները և 50.0 քառ. մետր շվաքարանը, ինչպես նաև դրանց զբաղեցրած 0.0684 հա ընդհանուր հողամասից՝ 0.0382 հա մակերեսով հողամասը հետ վերցնել և ամրացնել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին։

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահին և Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության նախագահին՝ մեկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համատեղ ապահովել սույն որոշման հավելվածում նշված գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը։

ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի

պետական կոմիտեի նախագահ ***Երվանդ Զախարյան***

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. *Իրավական ակտի անհրաժեշտությունը (նպատակը)*

Որոշման նախագծի ընդունման նպատակը պայմանավորված է հետևյալով.

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմում առկա են ընդհանուր թվով 58 տրանսպորտային միջոցներ, որոնց թիվը Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի փետրվարի 17-ի N 194-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 1511-Ն որոշման համաձայն ավելացել է, ուստի անհրաժեշտություն է առաջացել մշակել «Գույք ամրացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը։

1.1. *կարգավորման հարաբերությունների ներկա վիճակը և առկա խնդիրները*

Դեռևս 2000թվականին կադաստրի պետական կոմիտեի կողմից Հայաստանի Հանրապետության մշակույթի, երիտասարդության և սպորտի նախարարությանն է հանձնվել Երևանի Չայկովսկու փողոցում գտնվող ավտոպարկը իր չորս ավտոտնակներով շուրջ 900քմ. տարածք։ Հետագայում հայ շախմատիստների բնակարանային պայմանները բարելավելու նպատակով այդ տարածքում կառուցվել է բնակելի շենք։

Կարգավորման հարաբերության առկա խնդիրը կայանում է նրանում, որ կադաստրի պետական կոմիտեն ներկայումս չունի անհրաժեշտ պայմաններ իր տրանսպորտային միջոցների սպասարկումը և շահագործումը իրականացնելու համար։

1.2. *առկա խնդիրների առաջարկվող լուծումները*

Առկա խնդիրը կարգավորելու համար Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության հետ ձեռք է բերվել համաձայնություն Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության հաշվեկշռում գտնվող Արշակունյաց N 7 հասցեում գտնվող ավտոպարկի 172.5քմ. ընդհանուր մակերեսով ավտոտնակներից՝ 78.5քմ. ավտոտնակները և 50.0քմ. շվաքարանը, ինչպես նաև դրանց

զբաղեցրած 0.0684հա ընդհանուր հողամասից՝ 0.0382 հա մակերեսով հողամասը բաժանման սխեմայի համաձայն ամրացնել կադաստրի պետական կոմիտեին։

2. <u>Կարգավորման առարկան</u>

Նշված որոշման նախագծի ընդունմամբ կկարգավորվի դրանում նշված հարաբերությունները՝ կադաստրի պետական կոմիտեն կունենա անհրաժեշտ պայմաններ իր տրանսպորտային միջոցների սպասարկումը և շահագործումը իրականացնելու համար։

3. <u>Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը</u>

Իրավական ակտի կիրառման դեպքում, կադաստրի պետական կոմիտեի կողմից Արշակունյաց N 7 հասցեում գտնվող ավտոպարկի տարածքը կբարեկարգվի, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության համար կբացվի առանձին մուտք (դարպաս) և կօգտագործվի երկու հիմնարկների ավտոմեքենաների կայանման և շահագործման նպատակով։

Ե.ԶԱԽԱՐՅԱՆ